

Հաստատված է
Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի
գիտական խորհրդի 2017թ. հունիսի 08-ի թիվ 25 նիստում

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Ա. Առաքելյան

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ, ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ԱՄԲԻՈՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի /այսուհետև՝ ԵՊՀ ԻՄ/ արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոնը /այսուհետև՝ Ամբիոն/ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի /այսուհետև՝ ԵՊՀ ԻՄ/ միջհամալսարանական ստորաբաժանում է:

1.2. Ամբիոնը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3. Ամբիոնը սահմանված կարգով կարող է ունենալ պաշտոնաթուղթ /բլանկ/ և անհատականացման այլ միջոցներ:

1.4. Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել ԵՊՀ ԻՄ գիտակարգ խորհրդի որոշմամբ:

2. ԱՄԲԻՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կազմակերպել և անցկացնել «Ֆիզիկական դաստիարակություն» և «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր և արտակարգ

իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն» առարկաների ուսումնական ծրագրերին համապատասխան ուսումնական գործընթաց:

2.2. Մասնաճյուղի ուսանողների և աշխատակիցների մոտ ձևավորել տարաբնույթ արտակարգ իրավիճակներում նախընտրելի վարվելակերպի դրսևորման և խոցող գործոններից պաշտպանվելու կարողություններ:

2.3. Ուսանողներին և աշխատակիցներին իրազեկել արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ պետության կողմից իրականացվող բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումներին:

2.4. Կազմակերպել սպորտմասսայական միջոցառումներ և մասնաճյուղի հավաքական թիմերին նախապատրաստել հանրապետական և համալսարանական ուսանողական մարզական միջոցառումներին:

2.5. Կազմակերպել ուսանողների և աշխատակիցների առողջության ամրապնդմանն ուղղված սպորտային միջոցառումներ: Նպաստել սպորտի մասսայականացմանը:

2.6. Իրականացնել ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքներ: Կատարել ԵՊՀ ԻՄ կանոնադրությունից և ամբիոնի հիմնական գործունեությունից բխող այլ խնդիրներ:

3. ԱՄԲԻՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Ամբիոնի աշխատանքների համակարգումն իրականացնում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսումնամեթոդական վարչության պետը:

3.2. Ամբիոնի աշխատանքների ղեկավարումն իրականացնում է ամբիոնի վարիչը, ով մրցութային հիմունքներով ընտրվում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի փակ, գաղտնի քվեարկությամբ՝ 5 տարի ժամկետով: Ամբիոնի վարիչի ընտրության կարգն ու պայմանները սահմանվում են ԵՊՀ ԻՄ ամբիոնի վարիչի ընթացակարգով:

3.3. Ամբիոնի վարիչը՝

3.3.1. Կազմակերպում և վերահսկում է ամբիոնի ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքները, ապահովում է ամբիոնի հիմնական գործառույթների իրականացումը և լուծում դրանից բխող հիմնախնդիրները:

3. 3. 2. Ղեկավարում է ամբիոնի ուսումնասօժանդակ համակազմի աշխատանքները:
3. 3. 3. Ամբիոնը ներկայացնում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի, նրա ստորաբաժանումների, ինչես նաև այլ կազմակերպությունների հետ հարաբերություններում:
3. 3. 4. Ամենամյա հաշվետվություն է ներկայացնում ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին:
3. 3. 5. Հսկողություն է իրականացնում ամբիոնի սպորտային և քաղաքացիական ունեցվածքի, գույքի, առկա սպորտային կառույցների, տարածքների շահագործման և պահպանման նկատմամբ:
3. 3. 7. Կազմակերպում է մասսայական սպորտային և արտակարգ իրավիճակներին համահունչ միջոցառումներ և ուսանող մարզիկների սպորտային վարպետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ:
3. 3. 8. Պատասխանատվություն է կրում ամբիոնի առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծման համար:
3. 3. 9. Լուծում է սույն կանոնադրությունից բխող և ամբիոնի գործունեության հետ կապված այլ հարցեր:
3. 4. Ամբիոնի գիտակրթական գործունեության հետ կապված հարցերը քննարկվում են ամբիոնի նիստերում, որին մասնակցում են ամբիոնի գիտամանկավարժական համակազմի ներկայացուցիչները:
3. 5. Ամբիոնի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության և նիստերի արձանագրությունները ստորագրվում են ամբիոնի վարիչի և գործավարի կողմից:
3. 6. Ամբիոնը սահմանված չափանիշների համաձայն կազմում է հաստիքացուցակի նախագիծը և ներկայացնում մասնաճյուղի տնօրենին:
3. 7. Ամբիոնի գիտամանկավարժական կազմում ընդգրկված են ասիստենտներ և դասախոսներ: Գիտամանկավարժական կազմի բոլոր թափուր պաշտոններում տեղակալումն իրականացվում է ըստ աշխատանքային պայմանագրի, որը կնքվում է մինչև 5 տարի ժամկետով: Աշխատանքային պայմանագրի կնքմանը նախորդում է բաց մրցության ընտրությունը, որը իրականացվում է «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնների տեղակալման ընթացակարգի» համաձայն:

4. ԵԶՐԱՓՍԱԿԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐ

4. 1. Ամբիոնի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

4. 2. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից՝ մասնաճյուղի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

Հաստատված է
Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի
գիտական խորհրդի 2017թ. հունիսի 08-ի թիվ 25 նիստում

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Ա. Առաքելյան

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ, ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ԱՄԲԻՈՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի /այսուհետև՝ ԵՊՀ ԻՄ/ արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոնը /այսուհետև՝ Ամբիոն/ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի /այսուհետև՝ ԵՊՀ ԻՄ/ միջհամալսարանական ստորաբաժանում է:

1.2. Ամբիոնը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3. Ամբիոնը սահմանված կարգով կարող է ունենալ պաշտոնաթուղթ /բլանկ/ և անհատականացման այլ միջոցներ:

1.4. Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել ԵՊՀ ԻՄ գիտակարգ խորհրդի որոշմամբ:

2. ԱՄԲԻՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կազմակերպել և անցկացնել «Ֆիզիկական դաստիարակություն» և «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր և արտակարգ

իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն» առարկաների ուսումնական ծրագրերին համապատասխան ուսումնական գործընթաց:

2.2. Մասնաճյուղի ուսանողների և աշխատակիցների մոտ ձևավորել տարաբնույթ արտակարգ իրավիճակներում նախընտրելի վարվելակերպի դրսևորման և խոցող գործոններից պաշտպանվելու կարողություններ:

2.3. Ուսանողներին և աշխատակիցներին իրազեկել արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ պետության կողմից իրականացվող բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումներին:

2.4. Կազմակերպել սպորտմասսայական միջոցառումներ և մասնաճյուղի հավաքական թիմերին նախապատրաստել հանրապետական և համալսարանական ուսանողական մարզական միջոցառումներին:

2.5. Կազմակերպել ուսանողների և աշխատակիցների առողջության ամրապնդմանն ուղղված սպորտային միջոցառումներ: Նպաստել սպորտի մասսայականացմանը:

2.6. Իրականացնել ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքներ: Կատարել ԵՊՀ ԻՄ կանոնադրությունից և ամբիոնի հիմնական գործունեությունից բխող այլ խնդիրներ:

3. ԱՄԲԻՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Ամբիոնի աշխատանքների համակարգումն իրականացնում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսումնամեթոդական վարչության պետը:

3.2. Ամբիոնի աշխատանքների ղեկավարումն իրականացնում է ամբիոնի վարիչը, ով մրցութային հիմունքներով ընտրվում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի փակ, գաղտնի քվեարկությամբ՝ 5 տարի ժամկետով: Ամբիոնի վարիչի ընտրության կարգն ու պայմանները սահմանվում են ԵՊՀ ԻՄ ամբիոնի վարիչի ընթացակարգով:

3.3. Ամբիոնի վարիչը՝

3.3.1. Կազմակերպում և վերահսկում է ամբիոնի ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքները, ապահովում է ամբիոնի հիմնական գործառույթների իրականացումը և լուծում դրանից բխող հիմնախնդիրները:

3. 3. 2. Ղեկավարում է ամբիոնի ուսումնասօժանդակ համակազմի աշխատանքները:
3. 3. 3. Ամբիոնը ներկայացնում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի, նրա ստորաբաժանումների, ինչես նաև այլ կազմակերպությունների հետ հարաբերություններում:
3. 3. 4. Ամենամյա հաշվետվություն է ներկայացնում ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին:
3. 3. 5. Հսկողություն է իրականացնում ամբիոնի սպորտային և քաղաքացիական ունեցվածքի, գույքի, առկա սպորտային կառույցների, տարածքների շահագործման և պահպանման նկատմամբ:
3. 3. 7. Կազմակերպում է մասսայական սպորտային և արտակարգ իրավիճակներին համահունչ միջոցառումներ և ուսանող մարզիկների սպորտային վարպետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ:
3. 3. 8. Պատասխանատվություն է կրում ամբիոնի առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծման համար:
3. 3. 9. Լուծում է սույն կանոնադրությունից բխող և ամբիոնի գործունեության հետ կապված այլ հարցեր:
3. 4. Ամբիոնի գիտակրթական գործունեության հետ կապված հարցերը քննարկվում են ամբիոնի նիստերում, որին մասնակցում են ամբիոնի գիտամանկավարժական համակազմի ներկայացուցիչները:
3. 5. Ամբիոնի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության և նիստերի արձանագրությունները ստորագրվում են ամբիոնի վարիչի և գործավարի կողմից:
3. 6. Ամբիոնը սահմանված չափանիշների համաձայն կազմում է հաստիքացուցակի նախագիծը և ներկայացնում մասնաճյուղի տնօրենին:
3. 7. Ամբիոնի գիտամանկավարժական կազմում ընդգրկված են ասիստենտներ և դասախոսներ: Գիտամանկավարժական կազմի բոլոր թափուր պաշտոններում տեղակալումն իրականացվում է ըստ աշխատանքային պայմանագրի, որը կնքվում է մինչև 5 տարի ժամկետով: Աշխատանքային պայմանագրի կնքմանը նախորդում է բաց մրցության ընտրությունը, որը իրականացվում է «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնների տեղակալման ընթացակարգի» համաձայն:

4. ԵԶՐԱՓՍԱԿԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐ

4. 1. Ամբիոնի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

4. 2. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից՝ մասնաճյուղի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: